ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2024Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 23-Ի
ԹԻՎ 026-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի 2023թվականի տարեկան բյուջի եկամտային մասն ունի հետևյալ տեսքը.

	Պլան /հազար դրամ/	Կատարված /հազար դրամ/	
Վարչական բյուջե ,	2 243 238,3	2 279 611,4	101,6%
որից՝ սեփական եկամուտներ	1 006 520,1	1 042 404,4	106,3%
Ֆոնդային բյուջե	923 493,0	888 029,2	96,2%
որից՝ վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկ.	384 134,8	310 000,0	
Ընդամենը	2 782 596,5	2 857 640,6	102,7%

2023 թվականի տարեկան բյուջեն ըստ եկամտատեսակների կատարվել է հետևյալ համամասնություններով.

1.ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Հարկային եկամուտների գծով տարեկան նախատեսված 684177,3 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 721055,7 հազար դրամ կամ կատարվել է 105,4% -ով՝ այդ թվում.

1. Հողի հարկի գծով մուտքեր չեն նախատեսվել, փաստացի հավաքագրվել է 50807,0 հազար դրամ, որից ըստ գյուղերի՝ Այգեվան- 1901,7 հազար դրամ, Արաքս- 2895,3 հազար դրամ, Խանջյան – 5194,0 հազար դրամ, Լենուղի- 4634,5 հազար դրամ, Լուկաշին- 5724,9 հազար դրամ, Հացիկ- 4621,9 հազար դրամ, Մայիսյան- 3767,9 հազար դրամ,Մյասնիկյան- 8374,1 հազար դրամ, Նորավան-1087.7 հազար դրամ, Սարդարապատ – 2801,2 հազար դրամ:

2. Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար մուտքեր չեն նախատեսվել, փաստացի հավաքագրվել է 11408,1 հազար դրամ:

3. Գույքահարկ փոխադրամիջոցների համար պլանով նախատեսված 382594,7 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 427908,9 հազար դրամ կամ կատարվել է 111,8 %-ով, որից ըստ գյուղերի՝ Այգեվան - 13487,1 հազար դրամ, Արաքս-7621,0 հազար դրամ, Խանջյան- 13487,1 հազար դրամ,Լենուղի-9206,8 հազար դրամ, Լուկաշին- 17470,0 հազար դրամ, Հացիկ - 20689,3 հազար դրամ, Մայիսյան-8245,0 հազար դրամ, Մյասնիկյան- 27702,9 հազար դրամ, Նորավան –7396,9 հազար դրամ , Սարդարապատ- 37179,0 հազար դրամ:

4. Համայնքի բյուջե մուտքագրվող անշարժ գույքի հարկը պլանով նախատեսված 198058,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 126908,9 հազար դրամ կամ կատարվել է 63,9 %-ով, որից ըստ գյուղերի հավաքագրվել է՝ Այգեվան – 6232,2 հազար դրամ,Արաքս-9268,8 հազար դրամ, Խանջյան- 5963,1 հազար դրամ, Լենուղի- 6538,1 հազար դրամ, Լուկաշին-8456,9 հազար դրամ, Հացիկ- 14546,2 հազար դրամ, Մայիսյան- 9273,7 հազար դրամ, Մյասնիկյան-8272,1 հազար դրամ, Նորավան – 3744,5 հազար դրամ , Սարդարապատ-19210,4 հազար դրամ:

2. ՏՈՒՐՔԵՐ

Համայնքի բյուջե մուտքագրվող տուրքերի գծով տարեկան նախատեսված 103524,6 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 104442,8 հազար դրամ կամ կատարվել 100,9 %-ով:

1. Պետական տուրքերի գծով նախատեսված 44100,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 45071,1 հազար դրամ կամ կատարվել 102,2 %-ով:

2. Տեղական տուրքերի գծով նախատեսված 59424,6 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 59371,7 հազար դրամ կամ կատարվել է 99,9 %-ով, որից ըստ գյուղերի՝ Այգեվան- 292,8 հազար դրամ, Արաքս- 1331,5 հազար դրամ, Խանջյան – 387,0 հազար դրամ, Լենուղի- 224,4 հազար դրամ, Լուկաշին- 786,5 հազար դրամ, Հացիկ-785,0 հազար դրամ, Մայիսյան- 388,5 հազար դրամ, Մյասնիկյան- 1642,5 հազար դրամ, Նորավան – 138,0 հազար դրամ , Սարդարապատ- 2582,9 հազար դրամ:

Նույն թվում՝

ա) համայնքի տարածքում նոր կառուցվող օբյեկտների և շինությունների շինարարությունը սկսելու թույլտվության մուտքերի գծով նախատեսված 4090,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 3865,0 հազար դրամ կամ կատարվել է 94,5 %-ով:

բ) համայնքի տարածքում գտնվող օբյեկտները վերակառուցելու աշխատանքներ կատարելու թույլտվության մուտքերի գծով նախատեսված 1950,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 738,0 հազ. դրամ կամ կատարվել է 37,8 %-ով:

գ) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար նախատեսված 120,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 120,0 հազար դրամ կամ կատարվել է 100 %-ով:

դ) համայնքի տարածքում ոգելից խմիչքներ և (կամ) ծխախոտի արտադրանքի 2023 թվականի վաճառքի թույլտվության համար մուտքերի գծով նախատեսված 20080,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 21319,1 հազ. դրամ կամ կատարվել է 106,2%-ով,

ե) համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության մուտքերի գծով նախատեսված 3500,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 4791,1 հազար դրամ կամ կատարվել է 136,9 % - ով:

զ) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար գազի և վառելիքաքսայուղային նյութերի վաճառքի գծով 6220,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 5087,5 հազար դրամ կամ կատարվել է 81,8 %-ով:

է) Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00- ից հետո աշխատելու թույլտվության համար մուտքերի գծով նախատեսված 1645,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 1554,2 հազար դրամ կամ կատարվել է 94,5 %-ով:

ը) համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության մուտքերի գծով նախատեսված 14976,6 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 13739,8 հազար դրամ կամ կատարվել է 91,7 %-ով:

թ) համայնքի տարածքում ընթացիկ տարում մարդատար տաքսի ծառայություն իրականացնելու թույտվության համար մուտք չի նախատեսվել, փաստացի մուտքագրվել է 50,0 հազար դրամ:

ժ) համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի տարեկան թույլտվության համար նախատեսված 1150,0 հազար դրամի դիմաց տարեկան փաստացի մուտքագրվել է 1220,0 հազար դրամ կամ կատարվել է 106,1 %-ով,

ի) համայնքի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի տարեկան թույլտվության համար մուտքերի գծով նախատեսված 900,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 845,0 հազար դրամ կամ կատարվել է 93,98 %-ով:

լ) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար մուտքերի գծով նախատեսված 3293,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 2917,1 հազար դրամ կամ կատարվել է 88,6 %-ով:

3. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ

Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհների գծով 2023թվականի համար նախատեսվել էր 1230721,2 հազար դրամ, փաստացի ֆինանսավորվել է 1231210,0 հազար դրամ կամ կատարվել է 100 %-ով:

ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների գծով նախատեսված 1227888,7 հազար դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 1227888,7 հազար դրամ կամ կատարվել է 100 %-ով:

բ) Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումների (սուբվենցիաներ) գծով նախատեսված 2832,5 հազար դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 3321,3 հազար դրամ կամ կատարվել է 117,3 %-ով:

գ) Պետական բյուջեից տրամադրվող կապիտալ պաշտոնական դրամաշնորհների /սուբվենցիաներ/ գծով նախատեսված 539358,2 հազար դրամի դիմաց մուտքագրվել է 576229,1հազար դրամ:

4. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Այլ եկամուտներից մուտքերի գծով նախատեսված 328339,8 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել 327345,8 հազար դրամ կամ կատարվել է 99,7 %-ով:

Նույն թվում՝

1. Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության գծով նախատեսված 45615,2 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 42066,0հազար դրամ կամ կատարվել է 92,2 % - ով, որից ըստ գյուղերի՝ Այգեվան- 1103,4 հազար դրամ,Արաքս- 628,3 հազար դրամ, Խանջյան- 1716,3 հազար դրամ, Լենուղի-3372,5 հազար դրամ, Լուկաշին-445,6 հազար դրամ, Հացիկ- 2482,1 հազար դրամ, Մայիսյան-218,3հազար դրամ, Մյասնիկյան-1260,8 հազար դրամ, Նորավան – 359,5 հազար դրամ , Սարդարապատ- 930,6 հազար դրամ:
2. Գույքի վարձակալության գծով նախատեսված 4423,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 3870,7 հազար դրամ կամ կատարվել է 87,5 % - ով:
3. ՏԻՄ-ներին պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար ստացվող միջոցների գծով պլանով նախատեսված 5997,0 հազար դրամի դիմաց փաստացի ֆինանսավորումը կազմել է 5997,0 հազար դրամ:
4. Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարների գծով նախատեսված 7168,5

հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 5056,0 հազար դրամ կամ կատարվել է նախատեսվածի նկատմամբ 70,5 %-ով:

5. Տեղական վճարների գծով նախատեսված 232135,2 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 210262,3 հազար դրամ կամ կատարվել է 90,6 % - ով, որից Աղբահանության վճարների գծով նախատեսված 84129,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 79703,0 հազար դրամ կամ կատարվել է 94,7 % - ով:

6. Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարների գծով նախատեսված 28000,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 38210,8 հազար դրամ կամ կատարվել է 136,5 % - ով:

7. Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներից նախատեսված 1050,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 325,0 հազար դրամ կամ կատարվել է 21,7% - ով:

8. Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի բյուջե մուտքագրվող այլ ոչ հարկային եկամուտների գծով նախատեսված 3500,0 հազար դրամի դիմաց տարեկան փաստացի մուտքը կազմել է 16469,2 հազար դրամ :

<u>ԾԱԽՍԵՐ/Վարչական բյուջե/</u>

Արմավիր համայնքի 2023թվականի տարեկան բյուջեի ծախսերն ըստ ծրագրերի կատարվել են՝

<u>ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</u>

« Օրենսդիր և գործադիր մարմիններ» 01 բաժին 1 խումբ 1 դաս՝ նախատեսված 354483,9 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 345577,9 հազար դրամ կամ կատարվել է 97,5 %-ով:

1. «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» 01 բաժին 6 խումբ 1 դաս՝ նախատեսված 61306,8 հազար դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 56805,9 հազար դրամ կամ կատարվել է 92,7 %-ով:

<u>ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</u>

1.Ոռոգում՝ 04 բաժին 2 խումբ 4 դաս՝ նախատեսված 133068,6 հազար դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 132002,0 հազար դրամ կամ կատարվել է 99,2 %-ով:

2. Ճանապարհային տրանսպորտ 04 բաժին 5 խումբ 1 դաս՝ նախատեսված 44000.0 հազար դրամի դիմաց կատարվել է 43344,5 հազար դրամի ծախս՝98,5%:

3. Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող) Ոչ ֆին. ակտիվների օտարումից մուտքեր 04 բաժին 9 խումբ 1 դաս՝ նախատեսված -187769,7 հազար դրամի դիմաց մուտքագրվել է -189605,6 հազար դրամ :

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Աղբահանում 05 բաժին 1 խումբ 1 դաս՝ նախատեսված 293641,2 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել 278109,9 հազար դրամ կամ կատարվել է 94,7 %-ով:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

1. Ջրամատակարարում 06 բաժին 3 խումբ 1 դաս՝ նախատեսված 65742,8 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 65738,0 հազար դրամ կամ կատարվել է 100,0 %-ով:

2. Փողոցների լուսավորում 06 բաժին 4 խումբ 1 դաս՝ նախատեսված 59159,0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 59094,9 հազար դրամ կամ կատարվել է 99,9 %-ով:

3. Բնակարանային Օշինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող) 06 բաժին 6 խումբ 1 դաս՝ նախատեսված 7120,0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 6873,3 հազար դրամ կամ կատարվել է 96,5 %-ով:

ՀԱՆԳԻՍՏ. ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ

1. Գրադարաններ 08 բաժին 2 խումբ 1 դաս՝ նախատեսված 37705,6 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 32610,7 հազար դրամ կամ կատարվել է 86,5 %-ով:

2. Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ 08 բաժին 2 խումբ 3 դաս՝ նախատեսված 38828,4 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 33431,4 հազար դրամ կամ կատարվել է 86,1 %-ով:

3. Այլ մշակութային կազմակերպություններ 08 բաժին 2 խումբ 4 դաս՝ նախատեսված 45926,2 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 38562,6 հազար դրամ կամ կատարվել է 84,0 %-ով:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

1.Նախադպրոցական կրթություն ծախսերի գծով 09 բաժին 1 խումբ 1 դաս՝ նախատեսված 558402,5 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 538371,2 հազար դրամ կամ կատարվել է 96,4 %-ով:

2.Արտադպրոցական դաստիարակություն 09 բաժին 5 խումբ 1 դաս՝ նախատեսված 195387,9 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 185851,4 հազար դրամ կամ կատարվել է 95,1 %-ով:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող), 10 բաժին 7 խումբ 1 դաս՝ նախատեսված 17000,0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 14415,0 հազար դրամ կամ կատարվել է 84,8 %-ով:

ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ

1.ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ 11 բաժին 1 խումբ 2 դաս՝ նախատեսված գումարը կազմում է 384134,8 հազար դրամ: Վարչական բյուջեի պահուստային միջոցներից ֆոնդային բյուջե նախատեսվել է 384134,8 հազար դրամ հատկացում, որից փաստացի կատարվել է 310 000,0 հազար դրամը:

ԾԱԽՍԵՐ/ֆոնդային բյուջե/

1. Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում, հոդված 5113՝ տարեկան նախատեսված 1655042,8 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը ինն ամսում կազմել է 1545173,2 հազար դրամ կամ կատարվել է 93,4 %-ով:
2. Վարչական սարքավորումներ, հոդված 5122՝ նախատեսված 11492,4 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 3557,5 հազար դրամ կամ կատարվել է 31,0 %-ով:
4. Այլ մեքենաներ և սարքավորումներ,հոդված 5129՝ նախատեսված 2090,7 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 869,0 հազար դրամ կամ կատարվել է 41,6 %-ով:
5. Նախագծահետազոտական ծախսեր, հոդված 5134 նախատեսված 22000,0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 10288,0 հազար դրամ կամ կատարվել է 46,8 %-ով:

2023 թվականի ընթացքում ավարտվել են 2022թվականի 3-րդ եռամսյակին մեկնարկած սուբվենցիոն ծրագրերից Արմավիր քաղաքի թիվ 3 և թիվ 7 մանկապարտեզների շենքերի ջեռուցման համակարգի կառուցման, գազաֆիկացման, հին

դռները և պատուհանները նորով փոխարինման, Լենուղի և Այգեվան գյուղերի ջրամատակարարման ցանցերի վերակառուցման, Արմավիր քաղաքի Մ.Գորկու անվան փողոցի հիմնանորոգման աշխատանքները, Մյասնիկյան գյուղի մանկապարտեզի ջեռուցման համակարգի կառուցման և սանհանգույցի վերանորոգման, Սարդարապատ և Արաքս գյուղերի մանկապարտեզների շենքերի հիմնանորոգման աշխատանքները: Ավարտվել են Այգեվան և Նորավան գյուղերի Կենտրոնական փողոցների, Մյասնիկյան գյուղի Բաղրամյան փողոցի, Լուկաշին գյուղի Թամանյան փողոցի հիմնանորոգման աշխատանքները, Խանջյան, Մայիսյան և Սարդարապատ գյուղերի մշակույթի տներին հարակից պուրակների բարեկարգման աշխատանքները, Արմավիր քաղաքի Սահմանապահների փողոցի Հանրապետություն-Աբովյան հատվածի, Սահմանապահներ, Թումանյան, Հ.Ավետիսյան փողոցների Երևանյան-Շահումյան հատվածների հիմնանորոգման և ջրամատակարարման ցանցերի վերանորոգման, Հացիկ գյուղի ջրամատակարաման ցանցի վերակառուցման աշխատանքները: Ընթացքի մեջ է Արմավիր քաղաքի Կենտրոնական հրապարակի շատրվանի վերակառուցման, քաղաքի փողոցների հիմնանորոգման աշխատանքները, Սարդարապատ գյուղի մանկապարտեզի գույքի ձեռք բերումը:

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի 2023թվականի տարեկան բյուջեի ծախսային մասն ունի հետևյալ տեսքը.

	Պլան /հազար դրամ/	Կատարված /հազար դրամ/	
Վարչական բյուջե ,	2 251907,7	2 097 444,4	93,1%
Ֆոնդային բյուջե	1 502 856,2	1 370 282,0	91,2%
Ընդամենը	3 370 629,1	3 157 726,4	93,7%

ԲՅՈՒՋԵԻ ՍԻՋՈՑՆԵՐԻ ԴԻՖԻՑԻՏԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Արմավիր համայնքի բյուջեի 2023 թվականի տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 588032.7 հազար դրամ, իսկ տարեվերջի փաստացի հավելուրդը կազմել է 288024,9 հազար դրամ: